

ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ

Տեղեկագրեց՝ ՂԵՒՈՆԻ ԵՊՍ. ԳՈՒՐԵԱՆ

(Շաբ. ՍԻՄՆԻ 1928 ԹԻՒ 116 և վերջ)

Ն ի ս ա ղ .

13 Օգոստոս 1927, Շր.

Այսօրուան նիստի զրադու մե եղաւ «Խորհուրդ»-ները: Ի բացակայութեան Սիբիրացի եպիսկոպոսին իր ուղերձը կարգաց Գերմանա մետապոլիտան: Այդ ուղերձով եպիսկոպոսը կը բացատրէր թէ եօթը խորհուրդներ կան որոշուալէս ծանօթ նոր կրօնականութիւն, Դրոշմը, Հաղորդութիւնը, Ապաշխարութիւնը, Չեռնադրութիւնը, Ամուսնութիւնը եւ վերջին օծումը Օրթոտոքս եկեղեցին կը կոչէ Խորհուրդ՝ վանդի իրենց հոգեւոր ներգործութեան եղանակը ծածկեալ կը մեայ. բայց ԲԷ-րիստոնեանց պիտէ թէ անոնց միջոցաւ է որ Ս. Հոգին կը ներգործէ մեր մէջ: Չէ կարելի զատորոշել մէկը միւսէն իրը աւելի կարեւորութիւն եւ նշանակութիւն ունեցող խորհուրդ: Ամենին ալ Աստուծոյ կամարը արդիւններն են, եւ հաւատարմալէս անճրածիշտ մեզի մեր մեղքերէն փրկուելու համար: Այս էր բովանդակութիւնը Սիբիրացի եպիսկոպոսի ուղերձին, որուն հակառակ միջաճառով մը Օրթոտոքս ժողովրդական եկեղեցւոյ խիստ յարգելի եկեղեցական մը, Dr. Bartlet, յայտարարեց թէ միմիայն երկու խորհուրդները, Մկրտութիւնը եւ Հաղորդութիւնը կը նկատուի կարեւոր եւ անճրածիշտ, բնորոշելով հետեւեալ թէ բոլոր միւս խորհուրդները կրնան հետաքրքրական խնդիրներ յարուցանել. բայց աւելի պիտի նախընտրէր որ վիճարանութիւնը սահմանաւորուէին միայն Մկրտութեան եւ Ս. Հաղորդութեան շուրջ: Վանդի բառ Dr. Bartlet այս երկու խորհուրդներուն շուրջ երբ կարելի ըլլայ ստեղծել միութիւն մը, այսպիսի քրիստոնէական արտայայտութիւն մը որ ամենէն ընդունելի ըլլայ, միւսներուն համար վիճելի խնդիրներ պիտի չունենային: Բայց զժրատաւարար այս երկու կարեւոր խորհուրդներու շուրջն է որ քրիստոնէական եկեղեցիներ միշտ տարարածանաւած են իմաստի եւ բացատրութեան անսակէտով, եւ պատմէշներ ստեղծած են են եղբայրութեան մէջ:

Իսկ Canon Quick բացատրեց թէ Խորհուրդ մը աստուածային ըլլալու համար պէտք է ամեն բանէ առաջ ճշմարիտ հաւատը եւ ապաշխարութիւն, որպէսզի ընդունողը ներգործուի Աստուծոյ շնորհներէն: Այս նիւթին շուրջ թեր ուղիմ խօսեցան Dr. Lang, Rev. Robert Ashworth, եւայլր:

Ն ի ս ա լ .

15 Օգոստոս 1927, ԲԵ.

Համաժողովի այսօրուան ուսումնասիրութեան նիւթն էր. «Մէկ քրիստոնէութիւն եւ եկեղեցիներու յարաբերութիւնները իրարու հետ»: Գլխաւոր խօսողներէն Rt. Rev. Headlam, Կուլէսթրի եպիսկոպոս

բացատրեց թէ եկեղեցւոյ միութիւնը, ինչպէս որ Պօղոս Առաքեալ մեզ կ'ուսուցանէ, է միութիւն մը հոգեւոր, միութիւն մը ի Գրիստոս, միութիւն մը Ս. Խորհուրդական, միութիւն մը յաստատաճատ արածեալ եւ ներշնչեալ պաշտօնէութեամբ: Ան բաւարար թէ եկեղեցւոյ միութիւնը պէտք է ըլլայ միութիւն մը հաւատի, այսինքն հաւատը ի Գրիստոս, այնպէս ինչպէս որ արդիւնացած է Ս. Գիրքը եւ մեզ հաղորդուած է Առաքելական եւ Նիկիական հանգանակներով:

Միութիւն Ս. Խորհուրդական, այսինքն միութիւն Ս. Խորհուրդներու ընդունելութեան մէջ, ոչ թէ բացատրութեան մէջ խորհուրդներու: Խորհուրդներու վարդապետութեան եկեղեցին 1200 տարինեւ ի վեր զրադած է եւ քաղաքական աւտութիւններ նուիրած է եւ հետեւարար պիտի չմտածէր իսկ խորհուրդներու բացատրութեան կամ վարդապետութեան մէջ միութիւն առաջարկել. այլ պիտի խորհուրդներու ծիսականին, պաշտաման մէջ. խորհուրդներու սահմանումին մէջ չենք կրնար միանալ, բայց կրնանք միանալ խորհրդի պաշտաման մէջ իւրարանջիւր պաշտօնեայ պիտի տայ խորհուրդին այն նշանակութիւնը որ իր եկեղեցին կը դաւանէ եւ ինք կ'պատմէ է ըստ այնմ անոր:

Միութիւն պաշտօնէութեան մէջ. քրիստոնէայ պաշտօնեայի հասարակութեան կողմէ պարզ նշանակեալ պաշտօնեայ չէ, անոր պաշտօնը կուգայ Աստուծմէ. «Աստուած դրած է եկեղեցւոյ մէջ առաքելային, մարգարէներ, վարդապետներ»: Միութիւն պաշտօնէութեան բնիւր պիտի ուղիմ պարզապէս յայտնել թէ եկեղեցիներու մէջ խնդիր կը յարուցուի բնիւրով. «Մեր ձեռնադրութիւնները վաւերական են, մերինները չեն, թէ մենք ունինք յաջորդութիւն առաքելական, դուր չունինք»: Միակ կատարեալ ձեռնադրութիւն հոն է ուր եկեղեցին միացեալ է. երբ եկեղեցին բաժանեալ է, բոլոր կարգերը անվաւեր են, եւ չունին որեւէ յաջորդութիւն մը:

Վերջապէս միացեալ քրիստոնէական ճիշտական postulate պէտք է ըլլայ ազատութիւն եւ ներողամտութիւն. եւ ասիկա ճշմարիտ քրիստոնէական դաստիարակութեամբ միայն կրնայ ըլլալ: Եկեղեցի եկեղեցւոյ դէմ թշնամական ոգով լարուած վիճակ մը առնուազն հեթանոսական է: Վերջին տարիներու մէջ երկրի մը հոռմական եկեղեցին ընկերակաւաններու միացաւ բողոքական եկեղեցի մը իր պաշտամունքի տեղէն դուրս նետելու համար: Դարձեալ անախորժ եւ վիրաւորիչ էր երբ ղեկացանք թէ ուրիշ երկրի մը բողոքական եկեղեցին միացած է հակակոյրական պետութեան՝ արգիւրելու համար հոռմական կաթոլիկ վարժարանները: Վերադարձուած կ'զգամ ինքզինքս տեսնելով որ դաստիարակութեան մէջ կը պակսի ազատութիւնը եւ ներողամտութիւնը:

Առօրուս եւ վառագուր պիտի ըլլար հաստատել ձեռք մը միացեալ եկեղեցւոյ երբ ամէն բանէ առաջ եկեղեցւոյ գաւառներուն չէ տրուած բրիտանական, աւետարանական մարտը դատաւարաւորութիւն մը:

Rt. Rev. Headmaster Բանաստեղծութիւնը գնահատուցուաւ առհասարակ բոլոր եկեղեցւոյ ներկայացուցիչներէ: Խօսեցան նաեւ Rev. Peter Ainslie, Rev. Prof. J. Shaw, Bishop Dr. Kury, եւ այլք:

Ն Ի Ս Ա Ն

18 Օգոստոս 1927, ՍԶ.

Թէև համաժողովը Սոգոստոս 16էն իր լիացումը նիստերը զարկեցուցած էր, եւ սակայն կազմած էր երեք յատուկ Նոր Յանձնախումբեր եւ անոնց յանձնած էր վերջին երեք նիստերու վիճարանութեանց արդիւնքը՝ որպէսզի անոնք իրենց կարգին նոյն նիստերը մշակէին եւ մասնաւոր անդեկագրով մը ներկայացնէին իրենց եզրակացութիւնները համաժողովին ի վաւերացում: Երեք յանձնախումբերը այսօրուան նիստին բերած ըլլալով իրենց անդեկագրերները, հաղորդեցին հետեւեալ եզրակացութիւնները:

Ա. Եկեղեցիներու բաժանման մէջ զլիաւոր կէտերէն մէկը սա է որ եկեղեցի մը չի ծանչնար ուրիշ եկեղեցիի մը պաշտօնէութիւնը: Այս հարցը եկեղեցւոյ ունի նախ՝ պաշտօնէին դիրքը ու առաքելութիւնը իր պաշտօնին պարտաւորութիւնը զործարկելու կերպը: Նկատի առնելով այս տարբերութիւնները պէտք է բոլոր ամենայն ուսումնասիրել թէ կարելի՞ է ամենէն հաւասարադէմ ծանցուելիք պաշտօնէութիւն մը ստեղծել:

Բ. Եկեղեցւոյ մէջ խորհուրդներուն հարկ է տալ իրենց կարեւորութիւնը, իրեն շնորհաց միջոց: Անշուշտ եկեղեցւոյ մէջ խորհուրդին պարզ կատարումը բաւական չէ՝ եթէ խորհուրդը ընդունող անասանքը է: Եկեղեցիներու միութեան տեսակէտէն կարելի էր համարել որ խորհուրդները, ժամանակը Միջրատութիւնն ու Հաղորդութիւնը, որ ուղղակի Քրիստոսէ հաստատուած են, տեսական պարտաւորութիւն մը պէտք է ըլլան եկեղեցւոյ համար:

Գ. Չօքոս Առաքելի բաժնին պէս մարմին մը միութիւնը չի նշանակել միասնութիւն, այլ պէտք է պիտութիւն եւ եկեղեցին, որ է Քրիստոսի մարմինը, իր միութեան մէջ պիտի պահէ ու պաշտպանէ պէտքի պիտութիւնը: Եկեղեցին ամէն տանն էր խորհուրդը Աւետարանը բոլոր աշխարհի եւ հեղինակէ արժանի կ'ըլլայ իր վառմբի կաթողիկէ (—Եղեցեանական) կոչումին, հաւատարիմ մնալով Աւետարանին, զոր ստացաւ Յիսուս Քրիստոսէն՝ Առաքելութեան միջոցաւ:

Այս եզրակացութիւնները Տեղեկագիրներու հաղորդուելէն վերջ Օրթոտոքս եկեղեցւոյ ներկայացուցիչ Գերմանոս մետրապոլիտն ի դիմաց բոլոր արեւելեան Օրթոտոքս եկեղեցեաց յայտարարեց յատուկ ուղերձով մը թէ վեց նիստերու շուրջ համաժողովին ներկայացուած անդեկագիրներն չեն համապատասխաներ Օրթոտոքս եկեղեցւոյ սկզբանց եւ հետեւաբար նոյն եկեղեցւոյ կողմէ չէ կարելի բուէրակել զանոնք: Ան աւելցուց թէ «Օրթոտոքս եկեղեցւոյ

ներկայացուցիչները արդէն վերապահ գտնուած են յանձնախումբերու զուգորդութեան մէջ, այնպէս որ իրենց բանած ուղղութիւնը այսօրուան համար անակնկալ մը պէտք չէ նկատել: Ինք եւ իր եղբայրները այն համոզման եկած են երկար առնելու անհրաժեշտութեամբ թէ վարդապետական կէտերու մէջ եկեղեցեաց միութեան մասին վիճարանութիւն մը յաջողութեամբ պատկուած տեսնելէ առաջ պէտք է միութիւն մը հաստատել բրիտանական ընկերաբարոյական սկզբունքները շոշափող հարցերու մէջ: Օրթոտոքս եկեղեցին, հակառակ ընկերաբարոյական կեանքի տեսակէտով ալ արեւելիքի մէջ իր գոյութիւնը վառագուր տեսնելուն, այնու ամենայնիւ զրկեց պատգամաւորներ համաժողովիդ այն նպատակաւ որ կարենայ ստեղծել եղբայրութիւն մը աւելի լայն սահմանի մէջ եւ զանազան եկեղեցեաց ներկայացուցչաց մէջ յանուն մարդկային ընդհանուր բարօրութեան: Ներկայ ժամուս պահանջքը ուրիշ բան չէ բաց եթէ մանկ գործակցութեան մէջ միւս եկեղեցեաց հետ ընկերական եւ բարոյական շրջանակներու մէջ բրիտանական սիրոյ հիման վրայ: Գերմանոս մետրապոլիտն իր այս յայտարարութիւններով համաժողովի կանգնած շէնքը անխցժօրէն ուժեղացած եղաւ, ինչպէս զիտեղ տուած էր Ամերիկեան թղթակից մը:

Նախագահ Brent եպս. պատասխանեց. «Համաժողովը զուգորդուած է բանակցութեան (=conference) ոգով եւ ոչ թէ կրօնական վիճարանութեան (=controversy) համար: Ինչպէս իմ բացման ծառին մէջ բաւեց conference գործի մըն է խաղաղութեան՝ controversy գէղը մըն է պատերազմի: Մին չափաւորութեան կ'առաջնորդէ, միւսը ծայրահեղ բորբոքումի: Մին կ'աշխատի միարանութեան՝ միւսը կը հզօնէ զանազանութեան, մին զրուսիւն մըն է զործակցութեան յուժեղութեան համար պայքարները եւ անհասկացողութիւնները՝ միւսը զրուսիւն մըն է բաժանման: Արդ՝ հոս իրը conference ուղղութիւն ունենցող միմեանց խցժի եւ գիտակցութեան ճանաչողութեան համար: հետեւաբար չենք կրնար անգիտեալ յայտարարութիւններ արեւելեան Օրթոտոքս եկեղեցւոյ: Հոս conference մըն է, ուր հարցեր կան որոնց մասին համաժողով կրնանք ըլլալ եւ հարցեր որոնց մասին կը գտնազանուինք:

Օրթոտոքս եկեղեցւոյ անգամները ունեցան աւելն առիթներ սահմանելու իրենց տարակարծիք տարբերութիւնները խմբակցութեանց զուգորդանց մէջ: Շնորհակալ ենք իրենց անկեղծ եւ համարձակ նշանակելին որով անոնք կը ճշտեն իրենց ընթացքը եւ վերաբերմունքը: Կը յուսանք որ անոնք պիտի ամենայն կարեւորութիւնը հանդէպ անոնց ընթացքին՝ որոնք կը տարբերին իրենցմէ, ինչպէս մենք պատրաստ ենք տալու բոլոր կարեւորութիւնը իրենց համագործակցութեան:

Կը ծանչնամ եւ կը գնահատեմ այն դժուարին դիրքը ուր անոնք կը գտնուին: անոնք չեն ուզեր բաժնուած ըլլալ իրենց եղբայրներէն: հնազանդելով իրենց խցժին անոնք կատարեցին շնորհք՝ զրծուարին բան մը: իրենց յայտարարութիւնը անի միայն նպատակ բացատրելու եղանակը որով անոնք պիտի բուէրակէին կամ որով անոնք պիտի զգու-

շանային քուէարկել երբ իրենց ներկայացուէր ան-
ղեկագիրները:

Տեսա այսու Պալաքեան նպիսկապոս կարգաց իր
ճառը եւ եզրակացուց հետեւեալ կերպով. 1914-1918
համաշխարհային պատերազմի արեան ջրհեղեղին
վաղորդային Լոզանի այս վերնատան մէջ մեր հա-
մաշխարհային ժողովը թող ըլլայ նոր պենտէկոստէ
մը եւ մենք սիրոյ եւ խաղաղութեան աւախը առ-
նինք մեր երկիրներն եւ եկեղեցիները:

Կազմուեցաւ գործադիր Յանձնաժողով մը (Con-
tinuation Committee) 35 անդամներէ, զիս եւ Գրի-
գորիս եպօ. անգամ եւս ընտրեցին նոյն Յանձնաժո-
ղովին: Իրաւունք տրուեցաւ գործադիրին որպէսզի
եթէ կարելու եւ իմաստուն կը նկատէ, մեռ Խա-
նէ միջոցներ յաւաքելոյս համաժողովին զամար-
ման ի նպատակ քրիստոնէական միութեան:

Համաժողովին խորհրդակցութեանց եզրակացու-
թիւնները պիտի դիմելն թուր եկեղեցեաց պաշտո-
նական ճանապարհաւ եւ պիտի խնդրուի եկեղեցի-
ներէ որպէսզի տեղեկագիր դրկեն իրենց խորհրդակ-
ցութեանց վրայ, ուրիշ վերջ գործադիր յանձնաժո-
ղովը պիտի ուսումնասիրէ միջոցներ մեռնարկելու
նման նոր համաշխարհային համաժողովի մը հա-
մար: Մասնակցող եկեղեցիներէ խնդրել որ շարու-
նակին պահել իրենց ներկայացուցիչները: Ջանքեր
պիտի ի գործ դրուին պիտե՛կէ մը տարեկան 20,000
տոլարի, որպէսզի վճարուի ծախքերը գործադիրի
աշխատութեանց: Գործադիրը պիտի զբաղի լրացու-
ցիչ մանրամասնութիւններով:

Ն Ի Ս Ա Ռ .

19 Յոգոստոս 1927. Ուրբ.

Նախագահը ներկայացուց համաժողովին վեց
տեղեկագիրներէ եզրակացուած նախաշախիղ (preau-
bule) մը, որ նպատակ ունի ամփոփելու կատարե-
ալ ծրարքիր եւ նպատակը համաժողովին եւ հաս-
տատելու եկեղեցեաց միութեան շարժումին ապա-
գան. այս նախադատարարական ընտրիր համա-
ժողովէն ընդունուեցաւ:

Փ ա կ ու մ Ե Հ ա մ ա ժ ո ղ ո Վ ի

Փոխ նախագահ Dr. Garvie շնորհակալութիւն
յայտնեց համաժողովին որ դիւրացուց ժողովը զե-
կավարկելու իր պաշտօնը. «Շնորհակալ եմ Աստուծոյ
որ շատ զժուարթութեանց մէջ իրարու առաջնորդե-
ցինք եւ իրարու օգնեցինք, եւ փոթորիկներէ վերջ
հասանք նաւահանգիստ. կը յուսամ որ այս նաւա-
հանգիստը պիտի ըլլայ սկզբանիկէս մը յաջորդ ծառ-
բորդութեան: Այս առթիւ չեմ կրնար չգնահատել
այն թիւղարութիւններն զոր կիրառման պահուս ըս-
տացած եմ այնքան ծանր պատասխանատուութիւն-
ներով ընկճուած Brent եպիսկոպոսէ:

Համաժողովի նախագահ Brent եպիսկոպոսը հե-
տեւեալը իտեցաւ.

«Եղբայրներ, նաւապետ Garvie առաջնորդեց
բերաւ նաւը անվտանգ նաւահանգիստը, անիկա շատ
ճարտարօրէն վարեց նաւը եւ անոր համար կոչեցի
զինքը քօնֆէրանսի նաւահանգիստը:

«Մեծապէս շնորհապարտ եմ իրեն եւ զգացում-

ներս է որ կը յայտնեմ. չեմ կարծիր որ կարենամ
աւելցնել անիկ ուրիշ բան մը բացի վատահոգներէ
թէ կը յուսամ յառաջիկային կողմ կողքի կրկին կա-
րենանք գործել:»

Ապա շնորհակալութիւն յայտնեց ժողովականաց
որ իրենց պարտականութիւնը լիովին կատարեցին.
«Իրենց աշխատութեան արդիւնքը հաս չէ որ պիտի
տեսնեն այլ հետգծեալ իրենց տեղւոյն մէջ է որ պի-
տի զգան եւ տեսնեն» ըսաւ: Էւ յետոյ աւելցուց. «Է-
սի թէ Տօրթ. Կարփի առաջնորդեց նաւահանգիստ
նաւը. բայց աւիկա վերջին նաւահանգիստը չէ.
մենք ըրինք պատրաստութիւն մը նոր ճամբորդու-
թեան եւ անշուշտ ամէն որ այնքան պատրաստա-
կամութեամբ պիտի հաւաքէ իր ուժերը մասնակցելու
այդ նոր ճամբորդութեան որ պէտք չէ ուշանայ:»

Պրէնզ եպօ. հրաւիրեց ժողովականները որ եր-
գեն երգարանի 14 թիւ երգը, եւ ապա զգացուն շնչ-
տերով աղօթեց եկեղեցեաց միութեան եւ աշխարհի
խաղաղութեան համար եւ արձակեց համաժողովը իր
օրհնութեամբ:

ՎԵՐՋ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ազգային աղէտէն խոցոտուած սրտիս
համար բաւական մ'եղաւ վերածնունդը
Սիւնի, որով հանճարեղ Պապրիաքը մը,
կորովամիտ խմբադրապետ մը եւ ներհուն
աշխատակիցներ լոյս ու յոյս կը ծաւալեն
հայ ժողովուրդին մէջ: Սիւն, ամուր աշ-
տարակ մը դարձած, ներքին ու արտա-
քին յարձակումներու զէմ կը պաշտպանէ
Հայ եկեղեցին, որ, մանաւանդ մեր քա-
ղաքական կեանքին կորուստէն ի վեր,
միակ ազգային հեղինակութիւնը հանդի-
սացաւ, Հայութեան մարմինն ոգնայալը,
հայկական շէնքին կեդրոնական սիւնը:

Սիւնն նշանաւոր է նաեւ իր պատմական
ճշդութեամբով: Ազնաւոր ուսումնասիրու-
թեամբ կը վերաքննէ հին պատմութիւնը,
աչքի լոյս կ'ապաւէ փոշոտ մազազաթիւնե-
րու եւ ցեցակեր թուղթերու վրայ, եւ եր-
կիրդածութեամբ կ'արձանագրէ ժամանա-
կակից պատմութեան դրուադները: Թո՛ղ իր
ըջութեանէն օրինակ տեսնեն մեր այն զրիշ-
ները, որոնք կը խեղաթիւրեն մեր աչքերուն
առջեւ կատարուած իրողութիւնները եւ կը
ստեղծեն ժամանակակից պատմութիւն մը
որ գոյութիւն չէ ունեցած եւ կրնայ ապա-